

ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԿԱՊԵՐ

ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԵՎՈՐ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ

Ուղիղ շուրս ամիս փակ էին մեր ֆաղափի մշակույթի օջախների դռները: Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ծավալված իրադարձությունները փաստորեն կազմալուծեցին կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքը: Այսօր, շնայած հատուկ դրությունը և պարտադրյալ ժամին, բացվել են բատրոնի, կինոյի, համերգային դահլիճների դռները:

Արվեստը, մշակույթը միշտ եղել են մեր ժողովրդի կյանքի օրգանական մասը: Երգն ու երաժրությունը նրան ուղեկցել են երջանկության և ուրախության, հաղթանակների և հաջողությունների, ձախարհությունների և դժբախտությունների պահերին:

Այսօր ֆաղափի մշակույթի օջախների աշխատողների սուրբ պարտականությունը, նրանց հիմնական խնդիրն է՝ օգնել մարդկանց՝ վերադառնալու հոգևոր կյանքի նորմալ հուն, ազատվելու շուրջ մի տարի տևող ծանր խնհրից: Պետք է մեր բնմահարթակներում, համերգային դահլիճներում, պատկերասրահներում ցուցադրվեն այնպիսի ստեղծագործություններ, որոնք մարդկանց դուրս բերեն հոգեկան ծանր վիճակից, հոգեմաշ ապրումներից, մշուշված հույզանքից: Դրանք լավագույն միջոցներ կենդանիության և նրանց դաստիարակելու վեհ հայրենասիրության և բնեղենափոխման օգուտը, խոսքի, գործողության համար, հայրենիքի համար պատասխանատվության, հեղափոխական վերակառուցման այս բազմաբարձր ժամանակներում ամբողջ երկրի հանգիստ պարտի գիտակցության օգուտը:

Եկել է ժամանակը, որ մենք ավելի լայնորեն ծավալենք մեր բաժանի, համերգասրահի, մշակույթի տան և մյուս հանդիսահիմնարկների աշխատանքը:

Պետքատրոնի կալիպտիվը հանդիսատեսների դատին է ներկայացրել Յու. Սմբատովի «Դավանանքային» նոր ներկայացումը: Համերգային միանգամայն նոր ծրագրով է հանդես գալիս երգի-պարի

պետական անսամբլը:

Արդեն ամիսներ է, ինչ մեր համերգասրահներում չեն հնչում ֆաղափային մշակույթի տան «Արցախ» և «Մրակած» ինքնագործ կոլեկտիվների մեղեդիները: «Մրակած» չափ-ոտի այս նորաստեղծ ինքնագործ կոլեկտիվը իր համերգային ծրագիրը պատրաստելուց հետո այդպես էլ բախտ չունեցավ իրեն ներկայացնելու երաժշտասեր լայն հասարակայնությանը: Եվ այսպես, մոտ օրերս այս երիտասարդ կոլեկտիվը իր առաջին համերգով հանդես կգա մարզային ֆաղափատան մեծ դահլիճում, հիմնարկ-ձեռնարկությունների ակումբներում, մարզի ֆաղափներում ու գյուղերում: «Մրակածի» կոլեկտիվը միանգամայն երիտասարդ է՝ բաղկացած շեռհաջատ երաժիշտներից և մեծակատար երգչուհիներից: Իսկ մշակույթի տան «Արցախ» էստրադային ինքնագործ անսամբլը անցած ամիսներին հնարավորություն է ունեցել պատրաստել միանգամայն նոր ծրագիր, բարձրացվել է նրա կատարողների կազմը: Մոտ ժամանակներս «Մրակածի» և «Արցախի» կոլեկտիվները հանդես կգան մեր մարզի, ինչպես նաև հայկական հեռուստատեսության ծրագրում:

Մշակույթի տան դիրեկցիան, գործակցելով պետքատրոնի բաժանարարական ստուդիայի հետ, ձեռնամուխ է եղել պատանեկան ինքնագործ դրամատիկ խմբի ստեղծմանը: Նրանք հիմնականում կսպասարկեն ֆաղափ պատանեկան հանդիսատեսներին:

Անցած տարվա վերջերին Հայաստանի նկարիչների միությունը և Հայաստանի պետական պատկեր

ասրահի դիրեկցիան Ստեփանակերտի Մարտիրոս Սարյանի անվան պետական պատկերասրահին նվիրեցին երկու հարյուրից ավելի գեղանկարչական, ֆանդակագործական և գրաֆիկ ստեղծագործություններ, որոնք ներկայացնում են սովետական շրջանի շուրջ հարյուր հայ նկարիչների, ֆանդակագործների ստեղծագործությունների մի ծաղկեփունջ: Այս ստեղծագործությունների մի մասը այսօր ցուցադրվում է մեր ֆաղափի պատկերասրահում: Մյուս մասը կցուցադրվի առաջիկայում: Օրերս ֆաղափի «Ռոսիա» կինոթատրոնի նեմասրահներում բացվեց Հայաստանի նկարիչների միության անդամ, մեր համերկարացի Սուրեն Պետրոսյանի անհատական ցուցահանդեսը, որի թեմատիկան նվիրված է Լեռնային Ղարաբաղին: Այս օրերին ֆաղափի պետական պատկերասրահում ի ցույց են դրված տեղի շուրջ 18 նկարիչների և ֆանդակագործների ըստեղծագործությունները:

Հայաստանի նկարիչների միության Լենինականի բաժանմունքը, մինչև ահավոր աղետը, մեր պատկերասրահին էր ուղարկել իրենց բաժանմունքի նկարիչների և ֆանդակագործների ստեղծագործություններից շուրջ հարյուր գործ: Մեծ աղետից սկսած ֆառասուն օր շարունակ մեր պատկերասրահում ցուցադրվեցին այդ ստեղծագործությունները: Քառասուն օր շարունակ սև ժապավեններով շրջափակված ցուցապաստառը իր մոտ հրավիրեց հազարավոր ստեփանակերտցիների ու մեր ֆաղափի հարյուրավոր հյուրերի: Ցուցահանդեսը դիտեց մոտ 30 հազար այցելու: Լենինականցի նկարիչների և

ֆանդակագործների այդ ստեղծագործությունները նվիրվեցին մեր ֆաղափի պատկերասրահին: Մենք որոշել ենք ամեն տարի դեկտեմբերի 7-ին ցուցադրել այդ ստեղծագործությունները՝ ի հիշատակ աղետից զոհված լենինականցիների: Հայաստանի նկարիչների միության նախագահ Արա Շիրազի գլխավորությամբ մեր ֆաղափի հյուրն էր Հայաստանի նկարիչների միության ֆարտուղարության ամբողջ կազմը՝ բովո՞ 9 հոգի: Նրանք հանդիպումներ ունեցան Ղարաբաղի նկարիչների և ֆանդակագործների, մտավորականության ներկայացուցիչների հետ:

Վերջերս մեր ֆաղափն այցելեցին Հայաստանի մի խումբ երգահաններ: Նրանք իրենց ստեղծագործություններով հանդես եկան Սայաթ-Նավայի անվան երաժշտական ուսումնարանում, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում, Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի մանկական դպրոցում: Երգահանները մեծ ֆանակությամբ երաժշտական գրականության և հայ երգահանների ստեղծագործությունների նոտագրություններ նվիրեցին ֆաղափի երաժշտական կոլեկտիվներին:

Իրենց մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի մանկական դպրոցի երաժշտության, գեղանկարչության և խորհրդագրափայլի դասարանների մի խումբ ուսուցիչներ եղան Երևան ֆաղափի համապատասխան ուսումնական հիմնարկներում, որ նրանք մոտիկից ծանոթացան իրենց հետաբերող պարբերներին, ուսումնական ծրագրերին, դասավանդման մեթոդիկային: Այդ նպատակով Երևանի երաժշտական դպրոցների փոռնն ուսումնասիրեցին Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի մի խումբ ուսուցիչներ: Մայր Հայաստանի մշակութային հիմնարկների, երաժշտության և արվեստի գործիչների հետ մեր կապերը ավելի են ընդլայնվում: Հայաստանի միավորումը պլանավորել է 1989 թվականին Ստեփանակերտ, ինչպես նաև մարզի գյուղերը և ֆաղափները հյուրախաղերի ուղարկել 10-ից ավելի համերգային կոլեկտիվներ: Ռեակտիվ կադրերի պատրաստման ուղղությամբ արդեն առաջին փայլերն են կատարվել: Այս ուսումնական տարում Երևանի կոնսերվատորիա, գեղարվեստաբանական ինստիտուտ և գեղարվեստի ուսումնարան են ընդունվել վեց դարաբաղիչներ: Իսկ Երևանի էստրադային ստուդիայի դիրեկցիան պատրաստակամություն է հայտնել Ղարաբաղի պատանեկանի ուսուցման համար տեղում ստեղծել մեկ խումբ:

Այս, այս ամենը լավ է: Կան բոլոր հնարավորությունները հետագայում էլ ավելի ընդլայնելու, ծավալելու հոգևոր կապերը: Սակայն ես ուզում եմ անդրադառնալ այն ցավոտ հարցերին, որ տարիներ շարունակ փակել է մեր ֆաղափի մշակույթի զարգացման ուղին: Մենք հնարավորություն չենք ունեցել բավարարելու մեր՝ արցախցիների հոգևոր և հարցափայլի պահանջները: Այսօր մեր ֆաղափում բարձրագույն 1988-1989 թթ. միջոցառումների մասին հանրահայտ արձագանքներ են հնչում: Մենք մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում ՍՄԿԿ կենտկոմին և սովետական կառավարությանը՝ մարզի սոցիալ-տրենտեսական ու մշակութային զարգացման, ինչպես նաև ազգամիջյան հարաբերությունների հարցերի լուծման նպատակով ձեռնարկվող լայնամասշտաբ միջոցառումների համար: Համոզված ենք, որ առաջիկայում ինչպես մարզի, այնպես էլ ֆաղափի բնակչության հոգևոր-մշակութային պահանջների բավարարման համար կստեղծվեն ավելի լայն հնարավորություններ և աշխատանքային լավագույն պայմաններ:

Մենք համոզված ենք, որ դրանք կկառուցվեն: Սակայն մինչև կառուցվել արդյո՞ք հնարավոր չէ ֆաղափի ներկա հնարավորություններով փչել թե շատ բավարարել մեր մշակույթի օջախների ներկայիս պայմանները: Փաղափի հինգ գրադարանները գրտնրվում են անշուք, անհարմարավետ շենքերում, նույնը՝ ֆաղափային երեք ակումբների մասին: Իսկ մեր երիտասարդությունը լավ ակումբների խիստ կարիք է գոտում:

Փաղափի Մուրացանի անվան գրադարանը ունի ավելի քան 10 հազար ընթերցող, սակայն այն ես գուրկ է պայմաններից, ամենագրխավորը՝ չունի ընթերցասրահ: Կենտրոնական գրադարան և... առանց ընթերցասրահի: Միայն անցած տարվա փետրվարից սկսած Հայաստանի ֆաղափներից և շրջաններից այնքան գեղարվեստական գրականություն ենք ստացել (և շարունակում ենք ստանալ), որ այլևս հնարավորություն չկա դրանք տեղավորել: Հարյուր հազար գիրք՝ մի փոքր սրահում: Գրադարանի հարստությունը գիրքն է և նրա ընթերցողը: Մեր գրադարանը տեղում է հոգսերի մեջ:

Այո, կան հարցեր, որոնց լուծումը շղեպ է հետաձգել:

Մենք մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում ՍՄԿԿ կենտկոմին և սովետական կառավարությանը՝ մարզի սոցիալ-տրենտեսական ու մշակութային զարգացման, ինչպես նաև ազգամիջյան հարաբերությունների հարցերի լուծման նպատակով ձեռնարկվող լայնամասշտաբ միջոցառումների համար: Համոզված ենք, որ առաջիկայում ինչպես մարզի, այնպես էլ ֆաղափի բնակչության հոգևոր-մշակութային պահանջների բավարարման համար կստեղծվեն ավելի լայն հնարավորություններ և աշխատանքային լավագույն պայմաններ:

ԻՎԱՆ ՄԿՐՏՅԱՆ  
Ստեփանակերտի քաղաքական գործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ  
(Մեր սեփ. թղթ.)